Եղիշե Չարենց

Երեքը

Մի հին դղյակում ապրում էին գոց
Երեքը նրանք. դղյակում այդ հին:
Երկուսն էլ նրանք այդ երազ կնոջ
Ասպետներն էին:
Ու ապրում էին փակված ու մենակ,
Աշխարհից հեռու, դղյակի միգում:
Ու հին դղյակի կամարների տակ
Հոսում էր նրանց կյանքը անանուն:
Ի՞նչ էին անում այդ երեքը միշտ,
Այդ հին դղյակում ի՞նչ էին անում:
Կյանքը դղյակում երա՞զ էր, թե վիշտ
Ոչ-ոք չգիտեր ու չէր իմանում:
Որպես մի հեքիաթ, որպես հինավուրց
Դարերում ապրած լեգենդի կտոր
Կյանքը դղյակում դարձել էր անուրջ:
Ապրեցին անձայն ու անցան մի օ՛ր:

Մեկը դղյակում մենակ էր առաջ
Երազ կնոջ հետ: Մենակ էր ու գոհ:
Թվում էր նրան աշխարհը երազ,
Ու լույս էր այնպես. կապույտ երեկո:
Նստում էր մենակ և հսկում էր նա:
Կինը դղյակում և կար, և չկար:

Նստում էր մարմար սանդուխտի վրա՝
Աչքերը վճիտ ու սիրտը պայծառ:
Եվ մի իրիկուն հրոտ, հրավառ
Արևը մտավ գիրկը լեռների:
Կինը դղյակում և կար, և չկար.
Նա նստած էր լուռ՝ երազին գերի:
Արևը մտավ խորշը լեռների
Ու թվաց նրանց գիշերի միգում,
Որ ո՛չ մի հրաշք էլ ետ չի բերի
Անցած արևի հուրը ոսկեգույն...
Անշշուկ նստած լսեց, որ անցան,
Անդարձ հեռացան... Մի՞թե չգտավ:
Եվ նա չտեսավ, թե ինչպես, անձայն,
Մյուսն այն գիշեր դղյակը մտավ...

«Դու կանչե՞լ էիր, շշնջաց նրան.
Հեռու դաշտերից, արևի երկրից:
Արևը անցավ ու ժպտաց միայն:
Արևի երկրից կանչել էիր ինձ»: -
Երբ գիշերն իջավ դղյակի միգում
Երեքը նրանք կրակ չունեին:
Ու թվաց, որ դեռ երեկ իրիկուն
Երեքն էլ, նրանք, դղյակում էին:
Նայեցին իրար ու թվաց, թե դեռ
Դարերի միգում, սկզբի օրից
Երեքն էլ, նրանք, այստեղ են եղել
Մի՛շտ իրար կապված՝ հեռու բոլորից...

Ասաց շշուկով կինը երկուսին.
«Գիշերը հազար հրաշքներ ունի.
Գիշերի գրկում ընկնում է հոգին
Հազարաստղանի գիրկը անհունի՝:
Նայեցին իրար, նայեցին նրան:

Վառվում էր ոսկի հայացքը կնոջ
Կարծես ասելու ոչինչ չգտան:
Կարծես դողացին շրթերը դողդոջ:
Եվ մեկը հանկարծ հեծկլտաց մթում...
Մյուսը ժպտաց: Ու տեսան իրար:
Նվում էր մի տեղ դղյակի կատուն:
Ու դուրսը քամին խնդում էր խելառ:

Ու կինը, հիվանդ, մտավ անկողին:
Հսկում էին լուռ երկուսը նրան:
Ու գրկել էր մութ լռությունը հին
Նրանց երեքին: Ու լուռ էր միայն:
Ու մութ էր այնպես: Ու հիվանդ էր նա:
Եվ երկուսն էլ, լուռ, անկողնի առաջ
Երազում էին պատկերը նրա
Հեռավոր նրա հմայքը երազ:
Երազում էին: Երկուսն էլ կային:
Այնքա՛ն հարազատ ու մոտիկ այնքան:
Եվ սուրբ խոսքերով օրորում էին
Կնոջը հեռու: Երկուսն էլ նրան:

Ու լուռ էր այնպես: Ու լուռ էր: Ու գոլ
Լռության գրկում թվում էր նրանց,
Որ կյանքը մահից անհուն է ու խոր,
Մահու պես գաղտնի, անթափանց, անանց:
Ու հիվանդ էր նա: Բայց մահը չկար:
Միայն մշուշում երկու կրակներ
Կարծես բռնկվող, կարծես հոգեվար,
Երազի նման ժպտում էին դեռ:

Եվ մեկը հանկարծ ասաց մյուսին.
«Արևը երեկ անցավ ո՞ւր գնաց...»:
Մյուսը նայեց ու ժպտաց կրկին.

«Արևը չկա: Արևը - երազ...»:
Եվ մեկը ուզեց անդարձ հեծկլտալ,
Բայց բարձր ճչաց. «Օ, ցո՛ւրտ է այնքան...»:
Մյուսը ժպտաց: Ու երկա՛ր երկա՛ր
Լռեցին նրանք՝ անբարբառ, կարկամ:
Եվ երկուսն էլ լուռ նայեցին նրան:
Լուռ քնել էր նա: Լուռ էր ու լռին:
Եվ վերջին միգում վերջին լռության
Երկուսն էլ հլու սպասում էին:

Եվ մյուսն հանկարծ բարձրացավ տեղից
Ու սուր, լռության դղյակում կարկամ,
Ուր իջել էր մի անսահման կսկիծ
Ճչաց ու կանչեց տասներկու անգամ:
Տասներկու անգամ կանչեց, բայց չկար:
Արնոտ էր նրա ձայնը մշուշում:
Տասներկու անգամ կանչեց, խելագար
Ու դուրսը ոռնաց հուսահատ մի շուն:
Լուսնի երեսին ոռնաց ու լռեց:
Եվ վերջին անգամ նա կանչեց նրան:
Կինը բարձրացավ, ժպտաց, համբուրեց -
Ու մշուշի մեջ երկուսն էլ կորան...

Իսկ մեկը, նստած անկողնի առաջ,
Սպասում էր դեռ: Կարծում էր, որ նա
Դեռ պառկած է իր անկողնի վրա,
Որպես լույս-ցնորք ու հոգու երազ:
Չտեսավ, կարծես, որ ջահը հանգավ:
Չտեսավ, կարծես, որ անդարձ ընկավ,
Անդարձ փշրվեց բաժակը հոգու,
Որ զրնգում էր դեռ երեկ երեկո:
Մի՞թե չլսեց կանչը խելագար.
Տասներկու անգամ կանչեց ու տարավ:

Մի՞թե չտեսավ, որ ջահը չկար,
Որ ջահը հանկարծ արյունվեց մարավ:
Լուռ նստած էր նա անլույս սենյակում,
Աղոթում էր դեռ ու հսկում էր նա:
Եվ կամաց-կամաց տագնապը թաքուն
Իջնում էր նրա կարոտի վրա...

«Դու ի՞նձ ես ուզում. այստեղ եմ ահա:
Նստել եմ քեզ մոտ մի՞թե չգիտես:
Լռության գրկում սպասում է նա:
Շրթերդ հրոտ համբուրում եմ ես»:
Եվ կինը գրկեց, համբուրեց նրան:
Ջահերը նորից դղյակի միգում
Արնավուն լուսով բռնկված կորան:
Եվ խավարն իջավ անդուռ դղյակում:
Եվ կինը կարծես չտեսավ, որ լուռ,
Որպես մի ուրու, որ կա ու չկա -
Մոտեցավ հանկարծ լուսավոր, տխուր,
Տխրորեն վճիտ երազը նրա...
Մյուսը կարծես չիմացավ ինքն էլ,
Թե ինչո՞ւ հանկարծ թվաց, որ միգում
Մեկը, անանուն, անտես մոտեցել
Ու խուլ տագնապով դռներն է թակում...

Ու լուռ կանգնեցին իրարու դիմաց
Երկուսը կարծես առաջին անգամ:
Կինը հեծկլտաց ու նորից ժպտաց
Ժպիտն էլ, լացն էլ - օտա՛ր էր այնքան:
Ու կանգնած էին նրանք դեմ ու դեմ
Ու չգիտեին՝ ի՞նչ էին ուզում:
Բայց զգում էին, որ մի լուր գիտեն
Երկուսն էլ հոգու անլուր երազում:
Եվ զգում էին որ ճամփա չկա:

Եվ զգում էին, հոգնած ու տխուր,
Որ կընկնի՛, կընկնի՛ լույսը հեռակա
Վերջին խավարի գիրկը ահավոր:
Եվ զգում էին. վերջին անհունում,
Արևից հետո ու լույսից հետո
Երկուսն էլ նրանք՝ անդեմ, անանուն
Կդառնան հլու ողջակեզ ու զոհ...

Ու վերջին անգամ նայեցին իրար...
Ծանո՛թ էր այնքան աչքերի հեռուն...
Այն ո՞ւր է տանում հորձանքը վարար
Լույսը հոգեվար մարող աչքերում:
Դու ի՞նչ ես ուզում... Դու մրսե՞լ ես, հա՞:
Իսկ դո՛ւ, դո՛ւ, որ միշտ արևի բովում
Այրվում էիր եկել ես հիմա
Ու փնտրում ես իմ լուսնային հեռուն...
Ու աչքերը, խոր, խորունկ խորացան
Մյուս աչքերի խորության մեջ խոր:
Կարծես հիշեցին, կարծես մոռացան,
Որ եղել են, կան, ապրում են մի օր:
Եվ կինը խնդաց արնոտ մշուշում
Ու եկավ, կանգնեց երկուսի առաջ:
Միթե նա՞ է նա: Միթե չի՞ հիշում
Աստղերը վառած, աստղերը մարած:
Թե՞ ուրու է նա: Եկավ ու չկա:
Կանգնած են նրանք դեմ առ դեմ էլի:
Վերջին պարտության վայրկյանը հիմա
Կհնչե անդարձ... Եվ ուշ կլինի:

...Ու վայրկյանը, քար, ընկավ անողոք:
Հնամյա մի կամք, անդարձ ու տոկուն,
Որպես դարերի վիթխարի բողոք
Խտացավ նրանց աչքերի միգում:

Եվ մյուսն հանկարծ ճչաց քարացավ,
Կույր, զգաց հանկարծ, որ սառցե մի սուր
Մեխվեց իր սրտում: Սառցի պես մի ցավ
Կաշկանդեց նրա էությունը հուր:
Բայց վերջին միգում տեսավ, որ նա է՛լ -
Մեկը, հուսահատ, տասներկու անգամ
Ճչաց ու կանչեց վանդակում անել -
Եվ նույնպես ընկավ...

Խավարի գրկում դղյակը այն հին
Երերաց հանկարծ: Ու երկա՛ր, երկա՛ր
Գայլերը դաշտում դեռ ոռնում էին:
Ու լուռ էր այնպես: Ու ոչինչ չկար:

Կարս-Մոսկվա, 1915-1916թթ